ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N Ա-9.6.1/22

ք. Երևան

12.02. 2018 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարությաւն կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Ղուկասյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի <<ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 09.6.1.<<22.Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում>> ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 443280300 /չորս հարյուր քառասուներեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու

պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005403
Նախարարության աշխատակազմի
ղեկավար՝ _____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն

<<Կրթության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ
Երևան, Տ.Մեծի 67
<<Արդշինբանկ>>ՓԲԸ ,Էրեբունի մ/ճ
ՀՎՀՀ 00429214
Հ/Հ 2472300529500010
Տնօրեն՝ _____ Ն.Ղուկասյան
Կ.Տ (ստորագրություն)

Հավելված N1

2018 թ. փետրվարի 12 -ին

կնքված N Ա-9.6.1/22 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառումներ						
Հ/հ ը/կ	Անվանումը	Համառոտ բովանդակություն	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը/ հազար /դրամ/
1	Կրթությանբովանդակայինևմեթոդականսպասարկում , հանրակրթականդպրոցներիուսուցիչներիվերապատրաստում					369400,25
	Հանրակրթականուսումնական հաստատություններիմանկավարժականկադրերիմասնագիտականզարգացումըևատեստավորմաննախապատրաստումը: Ընթացիկվերապատրաստումներ:	Հանրակրթականուսումնական հաստատություններիմանկավարժականկադրերիմասնագիտականզարգացումըևատեստավորմաննախապատրաստումը: Ընթացիկվերապատրաստումներ:	1) Նախաատեստացիոնվերապատրաստումներ. -հանրակրթական ուսումնական հաստատություններիմանկավարժականկադրեր (ըստԿԳնախարարի 02.04.2016թ.N 234-Ա/2 հրամանի, նախարարությանևմարզպետարաններիԿԱԻներկայացրածցանկերումառկաուսուցիչներիքանակների), -ԼՂՀուսումնականհաստատություններիմանկավարժականկադրեր (ըստԼՂՀԿԳնախարարությանԿԱԻներկայացրածցանկերումառկաուսուցիչներիքանակների), 2) Ընթացիկվերապատրաստումներ. - տնօրեններիուսումնականաշխատանքիգծովտեղակալներ	ՎերապատրաստմանարդյունքումՀՀևԼՂՀհանրակրթականուսումնականհաստատություններումկաշխատենվերապատրաստմածուսուցիչներ, ովքերպատրաստկլինենհերթականատեստավորումներինևիրենցաշխատանքներըկկարողանկազմակերպելիանրակրթությանպետականչափորոշիչիևայլիրավականակտերիպահանջներինհամապատասխան: ՄեծթվովմանկավարժներկօգտվենԿԱԻ-իմասնագետներիկողմիցմատուցվածծառայություններից: Բոլորտիպիվերապատրաստում-	2018 թ. հոկտեմբերի 31	

			(18 ժամ, 50մասնակից), - տնօրենիմասնագիտացվածկրթա-կանաջակցություններիգծովտեղակալն եր (36 ժամ, 50 մասնակից), - դաստիարակչականաշխատանք-ներիկազմակերպիչներ (18 ժամ,25մասնակից), հանրակրթականդպրոցիդասղեկներ (30 ժամ, 50 մասնակից) - ներառականդպրոցիկարգավ-իճակիայցողհանրակրթականուսումն ականհաստատություն-ներիուսուցիչներ (30 ժամ, ըստԿԳնախարարությանԿԱԻներկայա ցրածդրպոցներիցանկերիևայդցանկեր ումառկաուսուցիչներիքանակի), - ազգայինփոքրամասնություն-ներիլեզուներովուսուցումիրակա-նացնողդպրոցներիուսուցիչներ (18կամ 30 ժամ, 20 մասնակից), - հանրակրթականդպրոցներիհոգե-բաններ (30 ժամ, 25մասնակից), - հանրակրթականդպրոցներիսոցիալա կանմանկավարժներ (18 ժամ, 20 մասնակից), - «MicrosoftMathծրագրիկիրառումըհանր ակրթականդպրոցում» թեմայով (18 ժամ, 80 մասնակից), - «Smartէլեկտրոնայինգրատախտակիկ իրառումըհանրակրթականդպրոցում» թեմայով (18 ժամ, 200 մասնակից),	ների, անհատականևխմբայինսեմինար-պարապմունքներիգնա-հատմանչափանիշներըկապահովեն Հանրակրթությանպետականչափոր ոշչիևհանրա-կրթությանոլորտըկարգավորողիրավ ական-նորմատիվակտերիպահանջներիբա վարարմանմիջոցովարդյունավետու թյանևորակիբարձրացումը:	2018 թ. դեկ տեմ-բերի 31	

			- «Սոցիալականցանցերըորպեսհեռավարուսուցմանգործիք» թեմայով (18ժամ, 80 մասնակից), - «MicrosoftընկերությանMicrosoftOneNote, MicrosoftPhotoStory, MicrosoftSnip, MicrosoftSway, MicrosoftAutoCollage, MicrosoftWorldWideTelescope, MicrosoftMixկրթականծրագրերը» թեմայով (18 ժամ, 80 մասնակից), - «Աշխարհի խոշորագույն տեխնոլոգիական ձեռներեցության վերապատրաստում-մրցույթը աղջիկների համար» ծրագրով (24 ժամ, 20 մասնակից), -Moodle հեռավարուսուցմանհամակրգիմիջոցովուսուցիչներիևԿԱԻաշխատակիցների (տարբերժամաքանկներով, 50 մասնակից) - Նախադպրոցական հաստատությունների (տնօրենների, մեթոդիստների, դաստիարակների, երաժշտության դաստիարկների, ֆիզիրահանգիչների) (30 ժամ, 400 մասնակից) 3)Կրթությանպետականկառավարմանլիազորվածմարմնի, տարածքայինկառավարմանմարմինների (Երևանիքաղաքապետարանի), տեղականինքնակառավարմանմարմինների, ուսումնականհաստատությունների,			

			այլիրավաբանականևֆիզիկականանձանցիայտերիհիմանվրահիրականացվողվերապատրաստումներ, ըստԿԱԻմասնագիտականբաժին-ներիկողմիցառաջարկվածծրագրայինժամա-քանակներիվերապատրաստումներ (100 մասնակից)) 4) Նախապատրաստականևկազ-մակերպչականաշխատանքներ. - Վերապատրաստմանենթակամանկավարժականկադրերիխմբե-րիձևավորումըստծրա-գրերիևհայտերի: - Վերապատրաստումներիուսում-նականծրագրերինյութերիմշակմանհամարխմբերիձևավորում, որոնցումընդգրկվումենմասնագետներԿԱԻ-իբաժիններիցևմասնաճյուղերից: - Վերապատրաստումներիդասըն-թացներիծրագրերի, ժամանա-կացույցերիմշակումևհաստատում: - Ելնելովտեղերիցստացվածառաջարկու-թյուններիցևդիտո-ղություններից՝դասընթացներիծրագրերինհամապատասխանբովանդակային նյութերի (մոդուլների), օժանդակուսումնականնյութերի (բաշխմաննյութեր) մշակում, հաստատումևբազմացում: - Ուսումնականառարկաներիդասավան		2018 թ. դեկ տեմ-բերի 31 2018 թ. դեկ տեմ-բերի 31	

			դմանվերաբերյալմե-թոդականնամակներիմշակումևհրատարակում:			
2.	Կրթությանբովանդակայինևմեթոդականսպասարկում	1/ Մասնակցությունողորտիգործունեությունըկարգավորողիրավականակտերիմշակմանը: 2/ Ուսումնականհաստատություններիհամարուսումնամեթոդականնյութերի, ծրագրերի, ուսումնականգրականությանմշակում:	1/ ՀՀ ԿԳ նախարարի հրամաններով և ընթացիկ հանձնարարականներով ԿԱԻ-ի մասնագետներն ընդգրկվում են ոլորտի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի /ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների նախագծերի / մշակումն իրականացնող խմբերում: Ապահովվում է նրանց մասնակցությունը և արդյունավետ աշխատանքը : 2/ Ուսումնական հաստատությունների ուսումնամեթոդական նյութերի, ծրագրերի, ուսումնական գրականության, հենքային և օրինակելի ուսումնական պլանների, ոլորտի առանձին բնագավառները կարգավորող կարգերիմշակման նպատակով և ի կատարումն ՀՀ ԿԳ նախարարի հրամանների և ընթացիկ հանձնարարականների ձևավորվում են խմբեր, որոնցում ընդգրկվում են մասնագետներ ԿԱԻ-ի բաժիններից և մասնաճյուղերից: Մշակված նյութերը	Դպրոցներըկունենանհանրակրթությանոլորտըկարգավորողնորմատիվակտեր, առանձինառարկաներիդասավանդմանևգործընթացներիվերաբերյալմեթոդականուղեցույցներ,որնէլկնպաստիհանրակրթությանպետականչափորոշչինհամապատասխանկրթությանգործընթացիհաջողիրականացմանը ևուսուցիչների ուսուցմանտարբերմեթոդներինտիրապետմանապահովմանը	Տարվա ընթացքում	

			ենթարկվում են փոձաքննության և ներկայացվում Կրթություն պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանը:			
		3/ Քննականթեստերի, մրցութայինառաջադրանքերի, օլիմպիականհարցաշարերիկազմո ւմ:	3/ Ի կատարումն ՀՀ ԿԳ նախարարի հրամանների և ընթացիկ հանձնարարականների, ինչպես նաև առանձին ուսումնասիրություններ կամ ստուգումներ իրականացնելիս անհրաժեշտ՝ քննական թեստեր, մրցութային առաջադրանքեր, օլիմպիական հարցաշարեր կազմելու նպատակով ձևավորվում են խմբեր, որոնցում ընդգրկվում են մասնագետներ ԿԱԻ-ի բաժիններից և մասնաճյուղերից:Մշակվում են համապատասխան բովանդակությամբ քննական թեստեր, մրցութային առաջադրանքեր, օլիմպիական հարցաշարեր: Անհրաժեշտության դեպքում նյութերը ենթարկվում են փոձաքննության և ներկայացվում Կրթություն պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանը:	Չափորոշչի պահանջներին համապատասխանող քննականթեստերի, մրցութայինառաջադրանքերի, օլիմպիական հարցաշարերի օգտագործումը կապահովի ստուգումների ու գնահատումների արդարացիությունը և միասնականությունը:		

		4/ Դասագրքերի, ձեռնարկների, ուսումնամեթոդական նյութերի, ծրագրերի և այլ ուսումնական գրականության բովանդակային փոնաքննություն:	4/ Դասագրքերի, ձեռնարկների, ուսումնամեթոդական նյութերի, ծրագրերի և այլ ուսումնական գրականության փորձաքննության և վերջնական եզրակացության կազմում:ՀՀ ԿԳ նախարի հրամաններով փորձարկման ներկայացվածդասագրքերի փորձարկման արդյունքների ամփոփում և ներկայացում: ԿԳՆ,ԴՇՀ, հրատարակչություններ:	Ոլորտըկապահովվիփորձաքննությ ուն և փորձարկումանցածդասագրքերով ,ուսումնաօժանդկձեռնարկներով և այլնյութերով: Գործընթացըգնահատվում է ելնելով<<Դասագրքերիփորձարկմ անմեթոդականուղեցույց>>-ի չափանիշներից :		
		5/ Հանրակրթականառարկայականչ ափորոշիչների, ծրագրերի, դասագրքերիմշտադիտարկում, փորձարկում, լրամշակմանառաջարկներիկազմո ւմներկայացում, դրանց ներդրման արդյունավետության ուսումնասիրում: Մեթոդական նամակների պատրաստում: Վերապատրաստման թեմատիկ պլանների, ուսումնական նյութերի և բաշխման նյութերի վերամշակում և արդիականացում:	5/ Հանրապետության դպրոցներում իրականացվում են գործածության մեջ դրված դասագրքերի մշտադիտարկման, խնդրահարույց հարցերի բացահայտման աշխատանքներ: Ուսումնական հաստատություններում նկատված բացթողումներն ու թերությունները հաղթահարելու գործում ցուցաբերվում է օգնություն, անհրաժեշտության դեպքում վերահրատակվող դասագրքերի որակը բարելավելու նպատակով կարծիքները և դիտողությունները ընդհանրացվում և առաջարկությունների տեսքով ներկայացվում ենկրթության պետական կառավարման լիազորված մարմին:	Ուսումնամեթոդականգրականությ անևուսումնականգործընթացիբար ելավմաննպատակովներկայացվա ծառաջարկների շնորհիվ դպրոցները կստանան որակյալ դասագրքեր: Կբարելավվի վերապատրաստումների արդյունավետությունը:		

		6/ԿԱԻ-ի մասնագետների մասնակցություն կրթությանը վերաբերվող միջազգային և տեղական գիտաժողովներին, կոնֆերանսներին սեմինարներին, տեսչական ստուգումներին և ուսումնասիրություններին:	6/ԿԱԻ-իմասնագետներըմշտական աշխատանքային կապերի մեջ են կրթության ոլորտում գործող միջազգային և տեղական գիտական, կրթական, հասարարական կազմակերպությունների հետ: Մասնակցում են նրանց կողմից կազմակերպվող գիտաժողովներին, կոնֆերանսներին սեմինարներին, տեսչական ստուգումներին, ուսումնասիրություններին,հանդ ես են գալիս զեկուցումներով, ելույթներով և առաջարկություններով, նրանց ներկայացուցիչներին մասնակից են դարձնում ԿԱԻ-ի կողմից իրականացվող նմանատիպ միջոցառումներին:	Արդյունքում կապահովվի ԿԱԻ-ի աշխատակազմի զարգացումը, միջազգային փորձին ծանոթացումը և արդյունավետ գաղափարների ներդրումը ՀՀ կրթական ոլորտում:			
		7/ Թղթակցություն ԿԱԻ-ի կողմից հրատարակվող մանկավարժական հանդեսներին և այլ լրատվամիջոցներին	7/ ԿԱԻ-ի մասնագետները հոդվածներում ներկայացնում են կրթության բարեփոխումների ընթացքը, դասավանդման մեթոդները, առանձին բնագավառներին վերաբերվող փոփոխությունները և նորությունները, կրթության և դաստիարակության ոլորտի առկա միտումները, մանկավարժության և հոգեբանության նորությունները:	Կրթության ոլորտի շահառուները կիրազեկվեն ոլորտում տեղի			

		8/ԿԱՀ-իմասնագետներիկողմից կազմակերպվում և իրականացվում են սեմինար-պարապմունքներ և խորհրդատվություններ հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, մանկավարժների և ՆՈՒՀ-երի դաստիարակների համար:	8/ Սեմինար-պարապմունքներն ու խորհրդատվությունները նվիրվում են հանրակրթական և հատուկ հանրակրթական դպրոցների գործունեու-թյանիրավականկողմերի, ավագդպրոցում՝մասնավորապե ս 12-րդ դասարանումուսուցմանկազմակ երպմանխնդիրների, չափորոշիչների, ծրագրերի, դասիպլանավորման (դասապլաններիմշակում, դասիտարբերփուլերումկիրառվ ողժամանակակիցմեթոդներ), ներառականկրթությանգործընթ ացիկազմակերպման, գնահատմանհամակարգիկիրա ռմանարդյունավետության, դասամատյանիլրացման, թեմատիկկակիսամյակայինթես-տերի կազմման սկզբունք-ներին,ծրագրերումևուսումնակա ննյութերումկատարվածփոփոխո ւթյուններիպարզաբանմանը: բնագիտա-մաթեմատիկական առարկաների մասնագիտական թեմաներով օնլայն սեմինարների անցկացում, որոշ սեմինարների նկարահանում և տեղակա-յում համացանցում:	ունեցող նորությունների և փոփոխությունների, ԿԱՀ-ում իրականացվող միջոցառումների մասին և իրենց աշխատանքները կդարձնեն ավելի արդյունավետ: Ուսուցման որակի ու արդյունավետության բարձրացում, մանկավարժներին անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական աջակցություն կազմակերպում:		
		9/ԿԱՀ www.aniedu.amկայքի սպասարկում: ԿԱՀ-ի կայքի միջոցով շահառուներին կրթության ոլորտում տեղի ունեցող	9/ ԿԱՀ և մասնաճյուղերի մասնագետների կողմից մշակված նյութերը, կայքում տեղակայելու նպատակով խմբագրվում և ձևափոխվում են			

		նորությունների և ԿԱԻ-ում իրականացվող միջոցառումների մասին տեղեկատվության տրամադրում՝ Այդ թվում. -ԿԱԻ և մասնաճյուղերի աշխատակիցների գործունեության արյունքում ստեղծված նյութերի տարա ծում: -Կրթության պարբերականների՝ 9 ամսագիր և 1 տեղեկագիր, էլեկտրոնային տարբերակների հրապարակում, Կրթության ոլորտի շահառուների հետ հետադարձ կապի ապահովում -Հարցումների, ուսումնասիրությունների իրականացում 10/ ԿԱԻ առցնանց կրթական ակադեմիոում տեսադասերի ստեղծում, մոնտաժում և տեղադրում: 11/ԿԱԻ Ինֆրոմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կայքը՝ www.informatika.am	(ոչ բովանդակային) հնարավորինս փոքր ծավալի բերելու համար, դասակարգվում ըստ կայքի մենյուի ենթաբաժինների: -9 ամսագիրի և 1 տեղեկագիրի, էլեկտրոնային տարբերակները /տարեկան 6 – 8 հանդես/ տեղակայվում են կայքում: <<Հաճախակի տրվող հարցեր>> բաժնի նյութերի արդիականացում և էլեկտրոնային փոստի միջոցով հետադարձ կապի ապահովում: -Առցցանց հարցումների, հարցաշարերի կազմակերպում և արդյունքների վերլուծություն: 10/ Ակադեմիայում տեղադրվում են առցանց տեսադասեր, որոնք ստեղծվում են ԿԱԻ համապատասխան առարկաների մասնագետների կոմղից: 11/Նյութերի մշակում, փաթեթների ստեծում և կայքում տեղադրում:	Կրթության ոլորտի շահառուները կիրազեկվեն ոլորտում տեղի ունեցող նորությունների և փոփոխությունների, ԿԱԻ-ում իրականացվող միջոցառումների մասին և իրենց աշխատանքները կդարձնեն ավելի արդյունավետ: ՀՀ հանրակրթական դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչները կիրազեկվեն ոլորտում տեղի ունեցող նորություններին և փոփոխություններին:		

		12/Moodle հեռավար ուսուցման հարթակի միջոցով առցանց վերապատրաստումների իրականացում	12/Առցանց դասընթացների մշակում և իրականացում :	Ուսուցման որակի ու արդյունավետության բարձրացում, մանկավարժներին անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական աջակցություն:		
3	Այլ գործառույթներ	Պայմանագրովնախատեսվածգործառույթներիշրջանակումպատվիրատուիբոլորհանձնարարականներիկատարում:				
4	ԱԱՀ					
Ընդամենը						73880.05
						443280.3

1 Նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆԿԳ գործառնականվարչություն
Հ/Հ 900011005403
Նախարարության աշխատակազմի
ղեկավար Ն.Հարությունյան
(ստորագրություն)

Կազմակերպություն

<<Կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ
Երևան, Տ.Մեծի 67
<<Արդշինբանկ>> ՓԲԸ ,Էրեբունի մ/ճ
ՀՎՀՀ 00429214
Հ/Հ 2472300529500010
Տնօրեն՝ Ն.Ղուկասյան
(ստորագրություն)